

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅՅԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԶՈՒԳԱՅԵՌՆԵՐԸ

Ելենա Ալեքսանյանի «Հայաստանը հոգում իմ ապրում է հզորաբար...» գիրքը՝ յուրովի բացառիկ է, որովհետև առաջին անգամ գիտական աշխատության մեջ են ներառվում հայ գրականության համեմատական ուսումնասիրության այսքան բազմազան հայեցակետեր: Եվ սա օրինաչափ է հեղինակի համար, որն իր ողջ գիտակցական գրականագիտական գործունեությունը նվիրել է համեմատական հետազոտությանը: Մենագրության բոլոր բաժինները՝ հայ-ռուսական, հայ-սլավոնական, հայ-ֆրանսիական և մյուսները, միավորված են ընդհանուր մեթոդաբանական հիմնադրությով. այն է՝ հայ գրականությունն իբրև ինքնաբովանդակ, ուրույն գեղարվեստական ստեղծագործություն, բնութագրված է միաժամանակ բաց՝ ստեղծագործական շփումների ու առնչությունների իմաստով, քանզի հանրահայտ է, որ գրականության մեկուսացած գոյությունն անհեռանկարային է և կործանարար ստեղծագործական գործընթացի և հոգևոր գործունեության համար: Միաժամանակ, համադրական վերլուծությունը, եվրոպական գրականությունների հետ զուգահեռները հնարավորություն են տալիս հեղինակին գտնել համաշխարհային գեղարվեստական շարժման մեջ այն արժանի տեղը, որն առավել լավ ու որոշակիորեն է բացահայտում ազգային գեղարվեստական գիտակցության բոլոր առանձնահատկությունները՝ կանխորոշելով հայ գրականության տեղը եվրոպական և համաշխարհային գրականության մեջ, բարձրացնելով ազգային խնդիրները համամարդկային մակարդակի: Գրքի արդիականությունը մի կողմից գլոբալացման գործընթացների լույսի ներքո քննությունն է և մյուս կողմից՝ ազգային գիտակցությունն ի ցույց հանելու փորձի մեջ: Դա հատկանշվում է առանձնահատուկ ուշադրությամբ ազգային գեղարվեստական ֆենոմենի հանդեպ, որը հստակորեն հետազոտվում է ներսից (այսինքն՝ իր ազգային գրականության դիրքերից) և դրսից (այսինքն՝ այլազգի գեղարվեստական գիտակցության կողմից) հետազոտելու արգասավորության շնորհիվ: Հավելենք նաև գրականագիտության մեջ ազգային գեղարվեստական ֆենոմենի խնդրի ուսումնասիրության անհրաժեշտությունը և հեղի-

Մակի մպատակամիտումը դիտարկելու այն՝ գտնելով նոր մոտեցումներ՝ շնորհիվ հետազոտության մեջ առատորեն ներգրավված գրական նյութի լայն գունաշխարհի և ճիշտ մեթոդաբանական կողմնորոշման:

Առավել ծավալուն բաժինը, ինչպես ենթադրվում էր, առնչվում է ռուսական գրական ավանդույթին, որը ելենա Ալեքսանյանի մշտական գիտական ուշադրության առարկան է. նա հայ և ռուս գրականությունների կապերին և տիպաբանական ընդհանրություններին նվիրված մի քանի մենագրությունների հեղինակ է: Ռուսական գեղարվեստական փորձի կարևոր ուղղությունների յուրացման ամբողջ շարք է լուսաբանվում գրքի առաջին՝ «Ռուսական» հատվածում, որտեղ գլխավոր կողմնորոշիչներ են դարձել բնութագրաբանության և ոճի առանձնահատկությունները այս կամ այն մեթոդի շրջանակներում: Այս առումով հատկապես հետաքրքրական են «Աբովյան և Գոգոլ», ինչպես նաև «Կատակերգությունը» հասարակական հայելի» հոդվածները, որտեղ քննվում են ոճի և ռեալիստական մեթոդի պրոբլեմները մեթոդի երգիծական անդրադարձներում: Գիտական դիտարկումներն այստեղ ճշգրիտ են. ի հայտ է գալիս մասնագիտական մոտեցումը մանրամասների և ոճական նրբերանգների վերլուծության մեջ:

Նույն այդ մասում է և «Չայաստանի դասերը» հոդվածը, որտեղ հայ ազգային մենթալությունն ու նախատիպն ամբողջությամբ քննվում են, ինչպես վերևում մշեցիմք, այլազգի գեղարվեստական գիտակցության հայեցակետից՝ ինքնատիպորեն և համոզիչ առանձնացնելով և լուսաբանելով հայ ազգային բնույթի էական և նոր կողմերը, ինչպես դրանք դիտվել և պատկերվել են Գրոսմանի, Բիտովի, Կարաբչիսկսկու կողմից, որոնք իրենց հերթին շարունակել են Բրյուսովից, Բելիից, Մանդելշտամից եկող կայուն ու արգասավոր ավանդույթները:

Չեղինակն ուշագրավ է համարում նաև ռուս գրողների՝ հայկական թեմային անդրադառնալու արդյունավետությունը, գրողներ, որոնք հայ հոգևոր ոլորտներում գտնում են ոգեշնչման նոր աղբյուրներ, բանաստեղծական նոր շունչ:

Սխալված չենք լինի, եթե ասենք, որ առաջին անգամ փորձ է արվում ուսումնասիրել սլավոնական՝ բուլղարական, լեհական, չեխական գրականությունների տարածքը՝ իբրև հայ ժամանակակից գրականության համատեքստ: Եվ ստեղծագործական, գիտական այդ նախաձեռնությունը, հուսով ենք, կունենա իր շարունակությունը:

Գրքում տեղ են գտել նաև հեղինակի՝ զուտ ռուս գրականությանը նվիրված հետազոտությունները, որոնք վերաբերում են և՛ XIX դարի դասական գրողներին (Պուշկին, Դոստոևսկի), և՛ «Արծաթե դարի» գրականությանը (Բլոկ, Բելի, Բուլգակով): Սրանց բնականոն շարունակությունն են դառնում գրքի ֆրանսիական բաժնի՝ սիմվոլիզմին նվիրված

հողվածները, որոնք մեր կարծիքով հատուկ ուշադրության են արժանի, քանզի Տերյանի, Մեծարենցի, Թեքեյանի քնարերգությունը համոզիչ ու նորովի է դիտարկվում Բողերի, Վեռնի բանաստեղծության համատեքստում: Եթե սրան հավելենք խորագնին վերլուծությունը, բանաստեղծական լեզվի նուրբ զգացողությունը, կարող ենք հաստատել չափազանց կարևոր մի թեմայի՝ հայ գրականության մեջ սիմվոլիզմի սկզբնավորման հարցի քննության հաջողությունն ու նորությունը: Հիշենք, որ ոչ վաղ անցյալում ուղղությունը գերադասում էին անվանել «նեոռոմանտիզմ»:

«Տերյանը և ֆրանսիական սիմվոլիզմը» հոդվածը բացահայտում է հայ բանաստեղծի սիմվոլիզմի անմիջական ակունքները՝ հասնելով ֆրանսիական «նզովյալ բանաստեղծներին»: Պետք է նշել հեղինակի կողմից դիտարկվող հայ բանաստեղծների ստեղծագործության պոետիկայի սկզբունքների և սիմվոլիստական աշխարհայեցության մերձեցող, բայց միշտ ուրույն համադրական շարքի գիտական որոշակիությունը: Նույնքան օրինաչափ են Ջոհրապի՝ հայկական «նորավեպի իշխանի» և Մուպասանի նորավեպերի զուգահեռները, որոնք Ջոհրապին բերում են համամարդկային հիմնախնդիրների ու դրանց գեղարվեստական լուծումների մակարդակին:

Ավստրիական և գերմանական գրականությունների համատեքստը նոր տեսանկյունից է ծանոթացնում ընթերցողին Ֆրանց Վերֆելի լայնորեն հայտնի ստեղծագործությանը՝ «Մուսա լեռան քառասուն օրը» վեպին, և ավելի քիչ հայտնի, շատ ավելի ուշ գրված էղգար Հիլզենրաթի «Վերջին մտքի հեքիաթը» գործին: Հետազոտողն իր առջև խնդիր է դնում հատկանշել կերպարների ազգային նկարագրի գերակշռությունը, ինչպես դա դիտվել և գեղարվեստական մարմնավորում է ստացել այլազգի գրողների վեպերում: Աշխատության մեջ այդ խնդիրն իրագործված է: Վերֆելն ի դեմս հերոսի՝ Բագրատյանի, բացահայտել է հայի ազգային էությունը՝ եվրոպական կրթությամբ, բայց անադարտ իր մենթալությամբ: Հատկանշական է, որ աշխատության հեղինակը հետևողականորեն ներկայացնում է գրողի՝ «Հայաստանի հայտնաբերման» աստիճանական անցումը ազգային երևույթների մակերեսային ընկալումից դեպի համամարդկային գաղափարների ուրույն արտահայտությունը: Հենց այդ էլ նկատի ունենալով՝ հեղինակի կողմից մեջբերվում է Կ. Պալճյանի՝ հետազայում Ամենայն հայոց վեհափառ կաթողիկոս՝ Վազգեն Առաքինի նրբամիտ և չափազանց արժեքավոր՝ նկատումը, որ Վերֆելը «կարողացել է խորքով և կատարելապես ըմբռնել հայի հոգին մինչև փոքրագույն մանրամասները... Առանց չափազանցության, մենք՝ որպես հայեր, ավելի լավ հասկացանք ինքներս մեզ»²: Այսպես՝ Վերֆելի համար՝ ոչ իր ժողովրդի հոգևոր էության նվիրական շերտերն ինչ-որ

իմաստով հայտնություն եղան մեզ՝ հայերիս համար: Դժվար է ավելի համոզիչ ի ցույց հանել ազգային գաղափարի գեղարվեստական արտահայտության թեմայի նախընտրած մոտեցման արգասավորությունը:

Եվ, վերջապես, ժողովածուն եզրափակող հոդվածը՝ նվիրված գերմանացի գրող է. Զիլզենրաթի վեպի քննությանը, վկայում է այն մասին, որ հետազոտության տեսադաշտում է հայտնվել հայկական ցեղասպանության վերաբերյալ արդիականությանը համահունչ գրքերից մեկը: Զարկ է ընդունել, որ յուրաքանչյուր հայի համար չափազանց ցավագին այս թեմայի գեղարվեստական մարմնավորումը դժվար է տրվում ազգային գեղարվեստական ընկալմանը: Այդ ահավոր ողբերգությանը մերձենալու համար թերևս պետք է որոշ հեռացում, ժամանակային տարածություն, հաճախ էլ անդրադարձ անիրական գրական որոշարկումներին: Զայ գեղարվեստական ավանդույթում ազգային հիշողության այդպիսի հաջողված անդրադարձը զուգորդվում է առասպելաբանության լայն կիրառմամբ: Եվ այստեղ առաջին հերթին պետք է հիշել խաչիկ Դաշտենցի «Ռանգպարների կանչը»: Նույն հունով են ընթացել նաև գերմանացի գրողի՝ Ժանրի որոշարկման որոնումները, որն իր վեպը կոչել է հեքիաթ-եղելություն: Սյուժեի փոխանցումն արյունալի իրադարձությունների վավերագրական պատումից մինչև հեքիաթային սյուժեի ֆանտաստիկականությունը, առավել քան ցցուն և ակնբախ, հակադրությունների միջոցով ի ցույց է հանում պատմության ծուղակում, սուլթանական դահիճների ձեռքում հայտնված հայերի ճակատագրի անմարդկայնորեն դաժան դրվագներ:

Ելենա Ալեքսանյանի գիրքը բազմաշերտ է, և նրա հոգևոր տարածքի յուրացմանը նպաստում է հետազոտության լեզուն՝ չափավոր հուզական, գիտական ոճի ճշգրիտ տրամաբանությամբ և միաժամանակ չժանրաբեռնված խիստ մեղ գիտականությամբ: Մնում է ափսոսալ, որ գիրքը լույս է տեսել փոքր տպաքանակով, նաև մաղթել հեղինակին, որ շարունակի լինել նույնքան հավատարիմ ու հետևողական իր գիտական նախասիրության՝ կոմպարատիվիզմի ուղղությանը, որի արգասավորությունն անվիճելի է: Ռուսական և եվրոպական գեղարվեստական համատեքստում հայ գրականությունը հառնում է ինքնատիպ էությամբ՝ միաժամանակ ուղղված համաշխարհային հանրությանը: «Զայրենիքի ճանապարհով՝ դեպի համամարդկային միասնություն»՝ Դերենիկ Դեմիճյանի այս կարգախոսը չի կորցնի իր այժմեականությունը երբեք:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Елена Алексанян, “Армения живет в душе могуче...” (Армения и армянская литература в мировом художественном контексте), изд-во “Лингва”, Ереван, 2002.

2. Կ. Պալճյան, Մուսալեոցի հայերը Վերջելի վեպում, Բուխարեստ, 1940, էջ 12: